ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3291-Ա « 02 » հուլիսի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 16-Ի Հ.3312-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-ին կետով, հաշվի առնելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի 15.12.2021թ. հ.12174, հ.12175 վկայագրերը և ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ 15.12.2021թ. հ.12176 վկայագիրը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 12.05.2026թ. հ.20-Ել-41551 եզրակացությունը, ինչպես նաև քաղաքացի Լևոն Ծատուրյանի 07.04.2022թ. հ.Դ-2655-2022 դիմումը.

1.Երևանի քաղաքապետի 2008 թվականի հուլիսի 16-ի «Կենտրոն համայնքի Նորագյուղ հ.42/2 բնակելի տան նկատմամբ Հոռոմսիմ Խաչատրյանի, Սուսաննա Մարտիրոսյանի, Գուրգեն Ծատուրովի և Լիլիթ, Լևոն Ծատուրյանների գույքային իրավունքները վերականգնելու մասին» հ.3312-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) Որոշման վերնագրում և 5-րդ կետում՝ «Հոռոմսիմ Խաչատրյանի, Սուսաննա Մարտիրոսյանի, Գուրգեն Ծատուրովի և Լիլիթ, Լևոն Ծատուրյանների» բառերը փոխարինել «Լևոն Գուրգենի Ծատուրյանի» բառերով.

2) Որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.Վերականգնել ք.Երևան, Կենտրոն, Նորագյուղ հ.42/2 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Լևոն Գուրգենի Ծատուրյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ 92.54քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 92.54քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:».

3) Որոշումը լրացնել նոր 1.1 կետով հետևյալ բովանդակությամբ.

«1.1.Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի հիման վրա, Երևան քաղաքի Նորագյուղ հ.42/2 հասցեում գտնվող 92.54 քառ.մետր մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները սահմանել բնակավայրերի հողերի բնակելի կառուցապատման:»:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

4.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ